ՎԵՐՋԻՆ ԱՐՅՈՒԵՂՈՏ ՄԱՐՏԸ....

«Միայն արին, քաջը միայն և հերոսը կարող է զոհաբերել...»
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

Գիտե՞ր արդյոք այդ պատանին, որ հետագայում իր բնավորության ամենաընդգծված գիծը վճռականությունը, պիտի օգներ կայացնելու մի որոշում, որով պիտի կատեցվեր թշնամու առաջխաղացումը դեպի հայրենի երկրի խորքը: Նա մեծանում էր մոր, քույրերի և եղբայրների հետ: Սակայն նրանց սիրելի մորը՝ Բավականին, սպասվում էր մեծ փորձություն: Նա առյուծի սիրտ պիտի ունենար՝ հաշտվելու այն իրողության հետ, որ պատերազմի ֆուգասային ռումբերն անցնելու են իր սրտի միջով՝ չխնայելով անգամ աղջկան Թամարային: և պատերազմը, որին մասնակցում են իր բոլոր երեխաները, չէր վերջանալու...

Դեռ 1988թ. մրրկահույզ օրերին ընտանիքի երկրորդ զավակը Ջիվան Աբրահամյանը գիտակցեց, որ արցախյան շարժումն անխուսափելիորեն վերածվելու է պատերազմի և վճռեց անցնել փոթորկի միջով... Երկու տարի Աֆղանստանում ծառայած և «Արիության մեդալով» պարգևատրված քաջին, անշուշտ, ծանոթ էին պատերազմի տարափները, բայց սեփական ժողովրդի ճակատագրական պահին, երբ վտանգված էին Հայաստանի և Արցախի սահմանները, երկիրը հարուստ փորձ և իմացություն ունեցող պաշտպանների կարիքն ուներ, և նա, հենց իր ծննդյան օրը՝ հուլիսի 6-ին, կամավոր զինվորագրվեց կազմավորվող Հատուկ գնդին:

1991թ. ամռանը մեկնեց Հյուսիսային Արցախ Շահումյան: Շահումյանի շրջանում անջատված էր էլեկտրականությունը, չէին աշխատում կապի միջոցները, Գետաշենն ու Բերդաձորը Արցախից մեկուսացված ու շրջափակված էին: Մռավի երկնքով թռչում էին միայն ուղղաթիռները, որոնցից մեկով Շահումյան իջավ Ջիվանը: Հուլիսի 24-ի լուսաբացին Բուզլուխի, Մանաշիդի, Էրքեջի բնակիչները թողեցին իրենց գյուղերը, իսկ կեսօրին ադրբեջանցիները խորհրդային զորքերի հետ մտան Բուզլուխ ու Մանաշիդ:

Ջիվանի ու պատերազմի աֆղանական դպրոցն անցած տղաների մարտական գործողությունները հուսադրեցին բոլորին: Նրանց մղած մարտերից մեկը նկարահանել է Ցվետանա Պասկալևան, մարտ, որը ցնցել էր նաև թշնամուն:

Պատմություն կերտող դյուցազնական հերոսի ճշգրիտ որոշումը հաջողությամբ պսակվեց: Ջիվանը գոհ էր: Եթե թշնամին կռվի թեժ պահին նայեր Ջիվանի աչքերին, կհասկանար, որ գործ ունի ի վերուստ ուղարկված ընտրյալի հետ: Կռիվը Ջիվանի և նրա մարտական ընկերներից ոմանց համար կրկնություն էր, թշնամուն կասեցնելը նպատակ: Ականանետերի հարվածներից զրահամեքենաներն ընկրկեցին, իսկ նրանցից մեկն անշարժացավ:

Վերիշեն հասնելու համար գյուղացիների օգնությամբ ընտրվեց անտառով անցնող մի ճանապարհ: Հոգնած տղաները չհասցրին լվացվել և ջուր խմել, երբ տեխնիկայի բվվոց լսվեց: Լսվեց նաև Ջիվանի հանգիստ, բայց խրոխտ և հատու ձայնը.

- Հակատանկային նռնականետերը և գնդացիրները առաջ բերել:

Նա պատրաստվում էր նոր մարտի, որը վերջինը եղավ հայրենանվեր հրամանատարի կյանքում:

Ջիվանը դիրքավորվեց Շամփրապտուկի բարձունքում: Ներքևում գյուղն էր: Թշնամին որոշել էր գրավել բարձունքը: Ռազմագիտական տեսանկյունից մարտն ընդունելը խելացնորություն էր՝ թեկուզ թշնամու տեխնիկայի գերազանցության պատճառով:

1991թ. հուլիսի 20-ն էր: Ջիվան Աբրահամյանը, Նիկոլայ Հայրապետյանը և Վարդան Տերտերյանը ընդունեցին մարտը, արյամբ կանգնեցրին թշնամու առաջխաղացումը և կյանքով պաշտպանեցին ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող բարձունքը: Նահատակներից Ջիվանի, Վարդանի և Նիկոլայի նվիրական աճյունները բերվեցին Ազատության հրապարակ: Նրանց գլխավերևում փողփողում էր հայկական Եռագույնը, որը բռնել էր Ջիվանի միակ որդին՝ փոքրիկ Դավիթը: Նա վերջին անգամ էր տեսնում հորը: Կինը՝ Լաուրան, մտաբերում էր ամուսնու խնդրանքը. «Ես կպաշտպանեմ հայրենիքի սահմանները, իսկ դու պաշտպանիր միակ որդուս՝ Դավթին»:

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ